ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1 2
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2
ԲԱԺԻՆ 2 3
ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ 3
ԲԱԺԻՆ 3 4
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԿԱՐԳԸ 4
ԲԱԺԻՆ 4 5
ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 5
ԲԱԺԻՆ 5 7
ՀԱՐԹԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄ 7
ԲԱԺԻՆ 6 8
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄ 8
ԲԱԺԻՆ 7 10
ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԿԻ ԿՐԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ 10
ԲԱԺԻՆ 8 10
ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 10
ԲԱԺԻՆ 9 11
ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ 11
ՀԱՎԵԼՎԱԾ 1 ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄ 13

ԲԱԺԻՆ 1

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պայմանագիր - Հաճախորդի կողմից acba digital համակարգով կնքված Միջազգային շուկայում բրոքերային ծառայություններից օգտվելու դիմում-պայմանագիրը, սույն պայմանները, Բանկի կողմից իրականացվող ներդրումային ծառայությունների մատուցման սակագները՝ TC 01-10#6 (այսուհետ՝ Սակագներ) և Արժեթղթերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերի նկարագիրը՝ eFO 75-12-34#6, միասին**,**

Արժեթուղթ - բաժնետոմս, կորպորատիվ և պետական պարտատոմս, բորսաներում վաճառվող ֆոնդի փայեր (ETF),

Հարթակ - Բանկի կողմից սպասարկվող acba digital ինտերնետ բանկինգ համակարգի web տիրույթը,

Միջազգային շուկա - Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող արժեթղթերի շուկաներ,

Առևտրային համակարգ - Միջազգային շուկայում Արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում փոխադարձ պարտավորությունների կատարման և այդ պարտավորությունների կատարումը երաշխավորող միջոցների ամբողջություն,

Հանձնարարական - Հարթակի միջոցով Բանկին ուղղված հանձնարարություն՝ Միջազգային շուկայում Հաճախորդի հաշվին Արժեթղթերով գործարքների կատարման,

Բրոքերային ծառայություններ - Հաճախորդներից Հանձնարարականներ ընդունելը և ի կատարումն հաղորդելը Միջազգային շուկայում բրոքերային ծառայություններ մատուցող մասնագիտացված անձանց,

Բրոքերային հաշիվ - Հանձնարարականների կատարման համար անհրաժեշտ և Հաճախորդի անունով բացված՝ դրամական միջոցների հաշիվ,

Արժեթղթերի հաշիվ - Արժեթղթերի հաշվառման համար նախատեսված՝ պահառուի կողմից վարվող գրառումների ամբողջություն,

Կիրառելի կարգավորումներ - համապատասխան Միջազգային շուկայի համար կիրառելի օրենսդրություն, այլ նորմատիվ իրավական ակտեր և/կամ տվյալ Միջազգային շուկայում կարգավորող մարմնի կամ օպերատորի կողմից սահմանված կամ տվյալ Միջազգային շուկայում արժեթղթերում ներդրումներին վերաբերող իրավական ակտեր, Առևտրային համակարգում պարտադիր կիրառելի կանոններ, ընթացակարգեր, կանոնակարգեր և ներքին կարգավորումներ,

Օրենք - «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք,

Կարգավորվող շուկա՝ հանրության համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն մատչելի կազմակերպական, իրավական և տեխնիկական միջոցների համակարգը, որը կանոնավոր կերպով արժեթղթերի առքի և վաճառքի առաջարկների հանդիպման վայր կամ միջոց է կազմակերպում, տրամադրում, ապահովում կամ իրականացնում է արժեթղթերով առևտրի կազմակերպման սովորաբար իրականացվող գործառույթներ: Կարգավորվող շուկան ներառում է ֆոնդային բորսան և այլ կարգավորվող շուկաները,

Առևտրային նստաշրջան՝ Առևտրային օրվա ժամանակահատված, որի ընթացքում էլեկտրոնային առևտրային համակարգով տվյալ Կարգավորվող շուկայի կանոններով սահմանված կարգով իրակա-նացվում է արժեթղթերի առևտուր,

Պատվեր՝ Հանձնարարականում նշված տեղեկությունների ամբողջություն, որը ներառում է գործարքի կնքման համար անհրաժեշտ գնային, ծավալային և ժամանակային պայմանները,

Շուկայական պատվեր՝ Պատվեր, որը նախատեսում է գործարքի կատարում՝ տվյալ պահին շուկայում գոյություն ունեցող լավագույն գնով,

Լիմիտային պատվեր՝ Պատվեր, որը նախատեսում է գործարքի կատարում՝ Պատվերում ֆիքսած գնից ոչ բարձր/ոչ ցածր գնով Արժեթուղթը գնելու/վաճառելու պայմանով,
Ստոպ պատվեր՝ Պատվեր, որը նախատեսում է գործարքի կատարում՝ Պատվերում նշված գնին Կարգավորվող շուկայում տվյալ Արժեթղթերի գինը հասնելու դեպքում,
Ստոպ-լիմիտային պատվեր՝ Պատվեր, որը միաժամանակ ներառում է գնման/վաճառքի Լիմիտային Պատվեր մի գնով և գնման/վաճառքի Ստոպ Պատվեր մեկ այլ գնով, ընդ որում՝ սույն պատվերն ընդունվում է միայն Կարգավորվող շուկայում գործարքներ իրականացնելու դեպքում,
Միջին գնի պատվեր (MidPrice)՝ գործարքը կատարվում է լավագույն առաջարկի և լավագույն պահանջարկի միջին հաշվարկային գնով,
Փակման գնով շուկայական պատվեր (Market-on-Close Order)՝ Շուկայական պատվերի տեսակ է, որի դեպքում գործարքը կատարվում է բորսայի Առևտրային նստաշրջանի փակման գնին հնարավորինս մոտ գնով,
Փակման գնով լիմիտային պատվեր (Limit-on-Close Order)՝ Լիմիտային պատվերի տեսակ է, որը կատարվում է Առևտրային նստաշրջանի փակման պահին, եթե սահմանված լիմիտային գինը հավասար է կամ ավելի բարենպաստ, քան փակման գինը,
Trailing Stop պատվեր՝ նախատեսված է, որպեսզի ներդրողին հնարավորություն տրվի սահմանել առավելագույն հնարավոր կորուստ՝ առանց սահմանափակելու հնարավոր շահույթը *(օրինակ՝ վաճառքի Trailing Stop պատվերի դեպքում սահմանվում է ստոպ գին շուկայական գնից ցածր՝ որոշված գումարի կամ տոկոսի չափով: Եթե շուկայական գինը բարձրանում է, ստոպ գինը նույնպես բարձրանում է նույն չափով, իսկ շուկայական գնի նվազման դեպքում՝ ստոպ գինը չի փոփոխվում, և Պատվերը կատարվում է, երբ շուկայական գինը հասնում է ստոպ գնին),*
Trailing Stop Limit պատվեր՝ տրամաբանությունը նույն Trailing Stop Պատվերի պես է, պարզապես Trailing Stop Limit Պատվերը դառնում է Լիմիտային պատվեր, երբ շուկայական գինը հասնում է սահմանված ստոպ գնին,
Մինչև առևտրային օրվա ավարտը պայմանով պատվեր՝ Պատվերի ժամանակային պայման, համաձայն որի՝ Պատվերը ենթակա է կատարման մինչև տվյալ առևտրային նստաշրջանի ավարտը,
Մինչև իմ կողմից չեղարկումը պայմանով պատվեր՝ Պատվերի ժամանակային պայման, համաձայն որի՝ Հաճախորդի կողմից տրված Պատվերը ուժի մեջ է մինչև Հաճախորդի կողմից դրա չեղարկման հանձնարարականի հաղորդումը,
Մինչև որոշակի ամսաթիվը պայմանով պատվեր՝ Պատվերի ժամանակային պայման, համաձայն որի՝ Հաճախորդի կողմից տրված Պատվերը ենթակա է կատարման մինչև դրանում նշված ամսաթիվը,
Առևտրային նստաշրջանի սկզբին պայմանով պատվեր՝ Պատվերի ժամանակային պայման, համաձայն որի՝ Պատվերը կատարվում է առևտրային նստաշրջանի բացման առաջին գնով,
Overnight պայմանով պատվեր՝ Պատվերի ժամանակային պայման, համաձայն որի՝ Պատվերի կատարումը կարող է կատարվել գիշերային նստաշրջանի ընթացքում՝ 20:00-3:50 (տեղական ժամանակով՝ 5:00-12:50): Բնորոշ է ամերիկյան շուկաներին,
Overnight+Day պայմանով պատվեր՝ Պատվերի ժամանակային պայման, համաձայն որի՝ Պատվերի կատարումը կարող է կատարվել գիշերային նստաշրջանի և երկարացված աշխատանքային ժամերի ընթացքում՝ 20:00 - 03:50 (տեղական ժամանակով՝ 05:00 - 12:50), 04:00 - 20:00 (տեղական ժամանակով՝ 13:00 - 05:00):

ԲԱԺԻՆ 2

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

2.1. Պայմանագրով Բանկը պարտավորվում է Պայմանագրով սահմանված վարձատրությամբ Հաճախորդներին մատուցել Բրոքերային ծառայություններ: Ընդ որում, Կողմերը Պայմանագրի

կնքմամբ ընդունում են, որ Հանձնարարականների փաստացի կատարումը չի ներառվում Բրոքերային ծառայությունների շրջանակում, դրանք կատարվում են Միջազգային շուկայում բրոքերային ծառայություններ մատուցող մասնագիտացված անձանց (այսուհետ նաև՝ Գործակալ) կողմից՝ Կիրառելի կարգավորումների համաձայն, ընդ որում, այն անձինք, ում Բանկն ի կատարումն հաղորդում է Հանձնարարականները, կարող են Հանձնարարականների կատարման համար իրենց ընտրությամբ ներգրավել Միջազգային շուկայում բրոքերային ծառայություններ մատուցող մասնագիտացված այլ անձանց (այսուհետ նաև՝ Ենթագործակալ):

ԲԱԺԻՆ 3

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

3.1. Նախքան Հարթակով Հանձնարարականի ներկայացումը Բանկին, Հաճախորդը պարտավոր է իր Բրոքերային հաշվին ապահովել Հանձնարարականի կատարման համար անհրաժեշտ դրամական միջոցները կամ Արժեթղթերի հաշվին՝ Հանձնարարականի կատարման համար անհրաժեշտ Արժեթղթերը,

3.2. Հանձնարարականները Հարթակով Բանկին ներկայացնելու պահին տվյալ Հանձնարարականի կատարման համար անհրաժեշտ միջոցների չափով սառեցվում են Հաճախորդի Բրոքերային հաշվին առկա դրամական միջոցները կամ Հաճախորդի Արժեթղթերի հաշվին առկա՝ վաճառքի ենթակա Արժեթղթերը,

3.3. Հաճախորդի Հանձնարարականը կատարվելուց անմիջապես հետո կատարվում է փոխհաշվարկ, և Բրոքերային հաշվից անակցեպտ գանձվում են Հանձնարարականի կատարման համար անհրաժեշտ դրամական միջոցները,

3.4. Հաճախորդի կողմից Հանձարարականը չեղարկելու (Պայմանագրով սահմանված պայմանների բավարարման դեպքում), Բանկի կողմից Հանձնարարականը չընդունելու և/կամ ի կատարումն չհաղորդելու դեպքերում Բրոքերային հաշվում սառեցված միջոցները համապատասխան չափով ապասառեցվում են:

3.5. Հաճախորդի կողմից Հարթակի միջոցով կարող են տրվել Պատվերների հետևյալ տեսակները.

- Շուկայական պատվեր
- Լիմիտային պատվեր
- Ստոպ պատվեր
- Ստոպ-լիմիտային պատվեր
- Միջին գնի պատվեր (MidPrice)
- Փակման գնով շուկայական պատվեր (Market-on-Close Order)
- Փակման գնով լիմիտային պատվեր (Limit-on-Close Order)
- Trailing Stop պատվեր
- Trailing Stop Limit պատվեր
- Մինչև առևտրային օրվա ավարտը պայմանով պատվեր
- Մինչև իմ կողմից չեղարկումը պայմանով պատվեր
- Մինչև որոշակի ամսաթիվը պայմանով պատվեր
- Առևտրային նստաշրջանի սկզբին պայմանով պատվեր

- Overnight պայմանով պատվեր *(կիրառելի է միայն ամերիկյան բաժնետոմսերի և բորսաներում վաճառվող ֆոնդի փայերի (ETF) շուկաների դեպքում)*
- Overnight+Day պայմանով պատվեր *(կիրառելի է միայն ամերիկյան բաժնետոմսերի և բորսաներում վաճառվող ֆոնդի փայերի (ETF) շուկաների դեպքում)*

Ընդ որում՝ պարտատոմսերի վերաբերյալ կարող են տրվել միայն շուկայական, լիմիտային, մինչև առևտրային օրվա ավարտը պայմանով և մինչև իմ կողմից չեղարկումը պայմանով տեսակի Պատվերներ:

ԲԱԺԻՆ 4

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Բանկը պարտավոր է.

4.1.1. Հաճախորդի կողմից պատշաճ տրված Հանձնարարականներն ընդունել և ի կատարումն հաղորդել Գործակալին,

4.1.2. Հաճախորդի համար վարել առանձին Բրոքերային հաշիվ (ԱՄՆ դոլար արժույթով), ընդ որում, Բրոքերային հաշվով գործառնությունները հետևյալն են. Հաճախորդի հանձնարարականով Բրոքերային հաշվին դրամական միջոցների մուտքագրում Հաճախորդի այլ բանկային հաշիվներից, Հաճախորդի հանձնարարականով Բրոքերային հաշվից դրամական միջոցների ելքագրում և փոխանցում Հաճախորդի այլ բանկային հաշիվներին, ինչպես նաև Պայմանագրով սահմանված դեպքերում Հաճախորդի կողմից վճարման/հատուցման ենթակա դրամական միջոցների անակցեպտ գանձում Բանկի կողմից,

4.1.3. Հաճախորդի ներկայացրած Հանձնարարականի կատարման անհնարինության դեպքում այդ մասին հայտի դարձնել Հարթակում,

4.1.4. մինչև Պայմանագրի կնքումը Հաճախորդին ծանոթացնել «Արժեթղթերի շուկայում Բրոքերային ծառայությունների մատուցման» ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) և Սակագներին,

4.1.5. Հաճախորդի Հանձնարարականի հիման վրա Արժեթղթերի գնման կամ վաճառքի յուրաքանչյուր գործարք կնքվելուց հետո մինչև գործարքի կնքմանը հաջորդող աշխատանքային օրվա ավարտը գործարքի կնքման վերաբերյալ հաշվետվությունը տրամադրել Հաճախորդին այն եղանակով, որով Հաճախորդը ստանում է Բանկում իր ընթացիկ հաշվի քաղվածքները,

4.1.6. պահպանել Պայմանագրի և Հաճախորդի Հանձնարարականների հետ կապված, ինչպես նաև Բրոքերային ծառայությունների մատուցման արդյունքում Բանկին հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը, բացառությամբ Պայմանագրով սահմանված թույլատրելի դեպքերում տեղեկատվության տրամադրման:

4.2. Հաճախորդը պարտավոր է.

4.2.1. Հանձնարարական ներկայացնելիս Բանկում իր Բրոքերային հաշվին ապահովել Հանձնարարականի կատարման համար անհրաժեշտ գումարը կամ Արժեթղթերի հաշվին՝ Հանձնարարականի կատարման համար անհրաժեշտ Արժեթղթերը,

4.2.2. Բանկին վճարել մատուցված Բրոքերային ծառայությունների դիմաց՝ համաձայն Սակագների,

4.2.3. Հատուցել իր կողմից տրված Հանձնարարականների ընդունման և հաղորդման հետ կապված Բանկի կրած գործառնական ծախսերը, և վճարել Հանձնարարականների կատարման համար պահանջվող միջնորդավճարները՝ առկայության դեպքում,

4.2.4. Հարթակում իրեն հասանելի դարձվող բորսաների տվյալներին բաժանորդագրվելու նպատակով կնքել համապատասխան բաժանորդագրային պայմանագրերը և վճարել իր դասակարգմանը համապատասխան բաժանորդագրային վճարները,

4.2.5. չհրաժարվել իր Հանձնարարականի հիման վրա կատարված գործարքից,

4.2.6. պահպանել Պայմանագրի և իր Հանձնարարականների հետ կապված տեղեկությունների գաղտնիությունը,

4.2.7. Հարթակը և Հարթակում իրեն հասանելի դարձվող տեղեկատվությունն օգտագործել բացառապես Պայմանագրի շրջանակներում իրեն մատուցվող Բրոքերային ծառայություններից օգտվելու նպատակով,

4.2.8. Բանկին տրամադրել Պայմանագրով սահմանված դեպքերում Բանկի կողմից պահանջվող լրացուցիչ տվյալները և փաստաթղթերը,

4.2.9. Պայմանագրի շրջանակներում իրեն մատուցվող Բրոքերային ծառայություններից չօգտվել ՀՀ օրեսդրությամբ արգելված որևէ գործունեության իրականացման նպատակով,

4.2.10. նախքան Բանկի համապատասխան ծառայությունից օգտվելը ծանոթանալ տվյալ ժամանակահատվածում գործող Սակագներին և Ընթացակարգին, որոնք հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում ՝ www.acba.am:

4.3. Բանկն իրավունք ունի.

4.3.1. Հաճախորդի կողմից վճարման ենթակա՝ 4.2.2, 4.2.3, 4.2.4 կետերում նկարագրված վճարներն ու ծախսերն անակցեպտ գանձել ինչպես Բրոքերային հաշվից, այնպես էլ Հաճախորդի՝ Բանկում առկա այլ հաշիվներից,

4.3.2. Եթե Հաճախորդն ունի Պայմանագրից բխող որևէ չկատարված դրամային պարտավորություն, գանձել պարտավորության գումարը Հաճախորդի՝ Բանկում առկա բոլոր բանկային հաշիվներից,

4.3.3. ցանկացած ժամանակ Հաճախորդից պահանջել լրացուցիչ տվյալներ և փաստաթղթեր՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով,

4.3.4. ցանկացած ժամանակ Հաճախորդից պահանջել և ստանալ լրացուցիչ տվյալներ և փաստաթղթեր՝ Գործակալից կամ Ենթագործակալներից նման պահանջ ստանալու դեպքում,

4.3.5. Իրականացնել Հաճախորդի անձնական տվյալների մշակում՝ Հավելված 1-ով սահմանված կարգով,

4.3.6. մերժել Հաճախորդի Հանձնարարականի ընդունումը և/կամ ի կատարումն չհաղորդել այն, եթե,

4.3.6.1. ներկայացվել է Հաճախորդին կամ նրա իրավասու ներկայացուցչին չպատկանող անձը հաստատող փաստաթուղթ կամ Հաճախորդն իրավասու չէ ներկայացնել այդպիսի Հանձնարարական կամ Բանկն ունի կասկածներ Հաճախորդին նույնականացնող փաստաթղթերի կամ վերջինիս վերաբերյալ այլ տվյալների արժանահավատության հետ կապված,

4.3.6.2.ներկայացվել է ոչ պատշաճ լրացված Հանձնարարական,

4.3.6.3.Հաճախորդի Բրոքերային հաշվին բավարար միջոցներ առկա չեն Հանձնարարականի կատարման համար,

4.3.6.4.Հաճախորդը չի կատարել Պայմանագրով ստանձնած իր որևէ պարտավորություն:

4.3.6.5.Բանկը տվյալ պահին զրկված է Հանձնարարականներն ընդունելու և ի կատարումն հաղորդելու հնարավորություններից ցանկացած պատճառով, ներառյալ, սակայն չսահմանափակվելով, հետևյալ դեպքերում. ծրագրային խափանում, Գործակալների հետ համագործակցության բացակայություն կամ դադարեցում, վերջիններիս կողմից Հանձնարարականների ընդունումից հրաժարում:

4.3.7. մերժել Բրոքերային հաշվին գումարների մուտքագրումը, եթե Բանկի գնահատմամբ Բրոքերային հաշվին գումարների մուտքագրմամբ կնքման հնարավորություն ունեցող գործարքները կարող են հանգեցնել զգալի վնասների առաջացման Բանկի կամ Հաճախորդի համար,

4.3.8. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ կասկածների, ինչպես նաև զեղծարարության վերաբերյալ կասկածների դեպքում կասեցնել Բրոքերային հաշվին գումարների մուտքագրումը,

4.3.9. Գործակալի հետ համագործակցության դադարման կամ կասեցման դեպքում կասեցնել Հաճախորդին Բրոքերային ծառայությունների մատուցումը,

4.3.10. Հաճախորդին Բրոքերային ծառայությունների մատուցման նպատակով իր հայեցողությամբ ներգրավել նաև այլ կազմակերպությունների, ինչպես նաև Միջազգային շուկաներում այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող էլեկտրոնային առևտրային համակարգեր,

4.3.11. Հաճախորդին պատկանող դրամական միջոցներն օգտագործել ի շահ իրեն՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները,

4.3.12. Հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող, ինչպես նաև Հաճախորդի վերաբերյալ «Արժեթղթերի շուկայի» մասին ՀՀ օրենքով սահմանված ծառայողական տեղեկատվությունը տրամադրել ՀՀ կենտրոնական բանկին, իրավասու պետական մարմիններին, Գործակալներին, Ենթագործակալներին, Միջազգային շուկայում մասնագիտացված բոլոր այն անձանց, ովքեր ներգրավվում են Հանձնարարականների կատարման նպատակով, Կիրառելի կարգավորումների համաձայն՝ այլ երրորդ անձանց, ինչպես նաև այն անձանց, որոնց հետ Բանկն իր կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված կնքել է համագործակցության/ծառայությունների մատուցման պայմանագրեր,

4.3.13. միակողմանիորեն փոփոխել Սակագները և Ընթացակարգի պայմանները:

4.4.Հաճախորդն իրավունք ունի.

4.4.1. Պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում Բանկին ներկայացնել Հանձնարարականներ,

4.4.2. Կասեցնել, չեղարկել կամ փոփոխել իր կողմից Բանկին տրված Հանձնարարականը՝ Հաճախորդի կողմից ներակայացված Հանձնարարականի կասեցման/չեղարկման/փոփոխման դիմումի համաձայն, քանի դեռ Բանկը չի կատարել Հանձնարականից բխող այնպիսի գործողություններ, որոնցից հրաժարվելը արդեն անհնարին է:

ԲԱԺԻՆ 5

ՀԱՐԹԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄ

5.1. Հաճախորդը պատասխանատու է Հարթակում Հանձնարարականներ ներկայացնելու համար օգտանվան և գաղտնաբառի, ինչպես նաև այլ անհատականացնող տվյալների գաղտնիության և այլ

անձանց չփոխանցման համար: Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բանկին օգտանվան և գաղտնաբառի, ինչպես նաև այլ անհատականացնող տվյալների գողության/կորստի կամ Հաճախորդի տվյալներով Հարթակ ցանկացած չարտոնված/չլիազորված մուտքի մասին:
5.2. Հարթակում Հաճախորդի օգտանվան և գաղտնաբառի մուտքագրմամբ տրված բոլոր Հանձնարարականները համարվում են Հաճախորդի կողմից տրամադրված, և դրանց հիման վրա իրականացված գործարքների պատասխանատվությունը կրում է Հաճախորդը:

ԲԱԺԻՆ 6

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄ

6.1. Հաճախորդը Պայմանագրի կնքմամբ հավաստիացնում է, որ գիտակցում է և ընդունում է.
6.1.1. Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում կիրառվում են համակարգչային ավտոմատացված ծրագրեր և համակարգեր, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ Հանձնարարականների ստացման, մշակման և փոխանցման ծրագրային համակարգեր (այուհետ բոլոր միասին՝ Ծրագրային ավտոմատացված համակարգեր),
6.1.2. Ծրագրային ավտոմատացված համակարգերի կիրառումը պարունակում է ռիսկեր, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ ծառայության ընդհատում կամ ուշացումներ, ցանցային կամ հաղորդակցության խափանումներ, կիբեռհարձակումներ, Ծրագրային ավտոմատացված համակարգերի ֆունկցիոնալության խափանումներ, Ծրագրային ավտոմատացված համակարգերի տեխնիկական սպասարկմամբ պայմանավորված ընդհատումներ (այսուհետ՝ Խափանումներ), որոնց հետևանքով Հաճախորդը կարող է կրել վնասներ: Բանկը Հաճախորդի առջև պատասխանատվություն չի կրում Խափանումների արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար,
6.1.3. Արժեթղթերում ներդրումները երաշխավորված չեն Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով:
6.1.4. ***Արժեթղթերով գործարքները կատարվելու են Կիրառելի կարգավորումների համաձայն:***
6.2. ***Հաճախորդն ընդունում է, որ Միջազգային շուկայում Արժեթղթերով գործարքների կատարումը պարունակում է մեծաքանակ ռիսկեր, ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝ արժեթղթերի շուկայում ընդունված ժամերից դուրս առևտրի, ցածր իրացվելիության, անկայունության, փոփոխվող գների, գների վրա ազդող իրադարձությունների, հայտարարությունների հետ կապված ռիսկերը: Հաճախորդը հաստատում է, որ տեղեկացված է և ստանձնում է նշված ռիսկերը,***
6.3. ***Հաճախորդն ընդունում է, որ Միջազգային շուկայում Կիրառելի կարգավորումների համաձայն կիրառվելիք սահմանափակումների արդյունքում Հաճախորդը կարող է կրել վնասներ, որոնց համար Բանկը պատասխանատվություն չի կրում,***
6.4. Հաճախորդն ընդունում է, որ տեղեկացված է Միջազգային շուկայում Արժեթղթերով գործարքների հետ կապված հետևյալ առանձնահատկություններին և ռիսկերին.
-Նույն օրվա ընթացքում Արժեթղթերով գործարքների կատարումը նպատակահարմար չէ սահմանափակ ֆինանսական ռեսուրսներ, սահմանափակ ներդրումային կամ առևտրային փորձ և ռիսկի հանդուրժողականության ցածր մակարդակ ունեցող անձանց համար: Հաճախորդը պետք է պատրաստ լինի կորցնելու բոլոր այն միջոցները, որոնք ներդնում է: Մասնավորապես, Հաճախորդը

չպետք է ներդնի այնպիսի միջոցներ, ինչպիսիք են, օրինակ, կենսաթոշակային խնայողությունները, ուսանողական վարկերը, կրթության կամ բնակարան ձեռք բերելու նպատակով առանձնացված միջոցները կամ կենսական ծախսերը հոգալու համար անհրաժեշտ այլ միջոցները,

-Անհրաժեշտ է զգուշանալ մեծ շահույթների վերաբերյալ տեղեկություններ պարունակող ներդրումային առաջարկներից. Միջազգային շուկայում Արժեթղթերում ներդրումները կարող են հանգեցնել նաև զգալի ֆինանսական կորուստների,

-Միջազգային շուկայում Արժեթղթերում ներդրումների իրականացումը պահանջում է համապատասխան գիտելիքներ արժեթղթերի շուկաների վերաբերյալ, ինչպես նաև Կիրառելի կարգավորումների իմացություն,

-Միջազգային շուկայում Արժեթղթերում ներդրումների իրականացումը կարող է Հաճախորդի համար առաջացնել զգալիորեն բարձր միջնորդավճարների վճարման պարտականություն:

6.5. Այն երկրներում, որտեղ թողարկված Արժեթղթերում ներդրումներ կատարելու են ուղղված Բանկի կողմից մատուցվող Բրոքերային ծառայությունները, կարող են տեղի ունենալ տնտեսական և/կամ քաղաքական իրադարձություններ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ ձեռբերված Արժեթղթերի արժեքի կամ Արժեթղթերից ստացվելիք եկամուտների վրա: Դրանց արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում: Հաճախորդը հաստատում է , որ տեղեկացված է և ստանձնում է նշված ռիսկերը,

6.6. Հաճախորդն ընդունում է իր պատասխանատվությունը Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում ձեռքբերված Արժեթղթերի պայմաններին անձամբ ծանոթանալու համար (օրինակ՝ բաժնետոմսի շահութաբաժինների բաշխման կանոններ, արժեթղթի հետագա օտարման կանոններ, և այլն): Բանկը Պայմանագրի շրջանակներում պարտավոր չէ Հաճախորդին ծանուցել նշված կանոնների և Արժեթղթերի վերաբերյալ ցանկացած կորպորատիվ գործողության/որոշման մասին, և պատասխանատվություն չի կրում Հաճախորրդի՝ նշված կանոններին և կորպորատիվ գործողություններին/որոշումներին տեղեկացված չլինելու արդյունքում կրած վնասների համար,

6.7. Հաճախորդն ընդունում է, որ այն կազմակերպությունները, որոնց թողարկած Արժեթղթերում ներդրումներ կատարելուն են ուղղված Պայմանագրի շրջանակներում Բանկի կողմից մատուցվող Բրոքերային ծառայությունները, կարող են սնանկ ճանաչվել, լուծարվել կամ տվյալ պետության օրենսդրությամբ սահմանված ցանկացած այլ հիմքով դադարել գոյություն ունենալ կամ դադարել վճարել Արժեթղթերից ակնկալվող եկամուտը, ինչի հետևանքով Հաճախորդին կարող են պատճառվել վնասներ: Հաճախորդը հաստատում է, որ տեղեկացված է և ստանձնում է նշված ռիսկերը,

6.8. Հաճախորդն ընդունում է, որ Բրոքերային ծառայությունների մատուցումը չի ներառում Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում կամ ներդրումների հետևանքով առաջացող հարկային պարտավորությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում Բանկի կողմից: Բանկը չի երաշխավորում Հարթակում ներկայացված տեղեկատվության (շուկաների վերաբերյալ տեղեկատվություն, գնային առաջարկներ, վերլուծություններ և այլն) ամբողջականությունն ու ճշգրտությունը, Հարթակում ներկայացված տեղեկատվությունը Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվություն չի համարվում, և այդ տեղեկատվությունը հիմք ընդունելու արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում,

6.9. Հաճախորդն ընդունում է, որ Հանձնարականներն իրականացվում են ոչ թե Բանկի, այլ Գործակալների կամ վերջիններիս կողմից ներգրավվող Ենթագործակալների միջոցով, որոնք

իրավունք ունենք միանձնյա սեփական հայեցողությամբ չեղարկել Հանձնարարականների կատարումը, ինչի արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում,

6.10. Հաճախորդը տեղեկացված է և Պայմանագրի կնքմամբ տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում ձեռքբերված Արժեթղթերը պահառության նպատակով հաշվառվեն Բանկի կողմից օտարերկրյա պահառուի մոտ բացված անվանատիրոջ հաշվում, միևնույն ժամանակ, դրանք օտարերկրյա պահառուի կողմից կարող են փոխանցվել՝ մի անվանատիրոջ հաշվից մյուսին՝ Բանկի և տվյալ օտերկրյա պահառուի միջև կնքված պայմանագրով սահմանված պայմաններով:

ԲԱԺԻՆ 7

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԿԻ ԿՐԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Պայմանագրով նախատեսված Բրոքերային ծառայությունների մատուցման դիմաց Հաճախորդը վճարում է Բանկին՝ համաձայն Սակագների,

7.2. Սակագներով նախատեսված վճարները, ծախսերի հատուցումները և Բանկի նկատմամբ ցանկացած այլ դրամային պարտավորություններ, որոնք կապված են Բրոքերային ծառայությունների մատուցման հետ Հանձնարարականի կատարումից հետո, ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը Բանկն անակցեպտ կարգով գանձում է Հաճախորդի բոլոր բանկային հաշիվներից, առաջնահերթ՝ ՀՀ դրամով բանկային հաշիվներից, ապա՝ արտարժութային, որի դեպքում արտարժույթի առքն ու վաճառքը կատարվում է Բանկի մոտ սահմանված փոխարժեքով,

7.3. Հաճախորդը փոխհատուցում է նաև Բանկի կատարած այն ծախսերը և այլ վճարները, որոնք անմիջականորեն կապված են Հաճախորդի Հանձնարարականների կատարման հետ,

7.4. Պայմանագրի լուծման դեպքում Հաճախորդը պարտավոր է փոխհատուցել իրեն պատկանող Արժեթղթերի և/կամ դրամական միջոցների վերադարձման գծով Բանկի կատարած ծախսերը՝ Բանկի պահանջում նշված չափով:

ԲԱԺԻՆ 8

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Հաշվի առնելով այն, որ Միջազգային շուկայում Հանձնարարականների կատարումն իրականացվում է Գործակալների, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում վերջիններիս կողմից ներգրավված Ենթագործակալների միջոցով, որոնք Բանկի կողմից չեն ընտրվում, ինչպես նաև Բանկը Պայմանագրի շրջանակներում միայն ընդունում և Գործակալներին ի կատարումն է հաղորդում Հաճախորդի Հանձնարարականները, Բանկը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց, այդ թվում՝ Գործակալների, Ենթագործակալների և/կամ օտարերկրյա պահառուների անվճարունակության կամ սնանկության, ինչպես նաև վերջիններիս կողմից Արժեթղթերով գործարքների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Հաճախորդին պատճառված վնասների համար,

8.2. Բանկը պատասխանատվություն չի կրում Միջազգային շուկայում կարգավորող մարմինների, Առևտրային համակարգերում քլիրինգ իրականացնող կազմակերպությունների, Հանձնարարականների կատարման մեջ ներգրավված ցանկացած այլ անձի գործողության կամ անգործության հետևանքով, ինչպես նաև Կիրառելի կարգավորումների փոփոխման, չեղարկման կամ նոր Կիրառելի կարգավորումների սահմանման հետևանքով Հաճախորդին պատճառված վնասների համար,

8.3. Բանկը պատասխանատվություն չի կրում Առևտրային համակարգում ներգրավված այլ անձանց կողմից իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև Առևտրային համակարգում տեղի ունեցած խափանումների արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար,

8.4. Բանկը պատասխանատվություն չի կրում Ծրագրային ավտոմատացված համակարգերի խափանման կամ ոչ պատշաճ աշխատանքի արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար,

8.5. Հաճախորդը պատասխանատվություն է կրում Բանկի կողմից Հաճախորդին մատուցվող Բրոքերային ծառայությունների շրջանակներում երրորդ անձանց կողմից Բանկին ներկայացված հայցերի/պահանջների բավարարման արդյունքում Բանկին պատճառված վնասների համար,

8.6. Հաճախորդը պատասխանատվություն է կրում իր կողմից Բանկին տրամադրված տվյալների, տեղեկությունների և փաստաթղթերի՝ իրականությանը չհամապատասխանելու, ինչպես նաև Պայմանագրով և/կամ ՀՀ կիրառելի իրավական ակտերով և/կամ Կիրառելի կարգավորումներով սահմանված իր պարտականությունների խախտման արդյունքում Բանկին պատճառված վնասների համար:

8.7. Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված տվյալների, տեղեկությունների, փաստաթղթերի և հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելու, ինչպես նաև Պայմանագրով և/կամ ՀՀ կիրառելի իրավական ակտերով և/կամ Կիրառելի կարգավորումներով սահմանված իր որևէ պարտականության խախտման դեպքում, ինչպես նաև զեղծարարության կամ զեղծարարության կասկածի դեպքում Բանկն իրավունք կասեցնել Բրոքերային ծառայությունների մատուցումը կամ միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ առանց Հաճախորդին նախնական տեղեկացման:

8.8. Ցանկացած դեպքում Բանկի պատասխանատվությունը Հաճախորդի առջև սահմանափակվում է Հանձնարարականները դիտավորությամբ ի կատարումն չհաղորդելու դեպքերում Հաճախորդին պատճառված վնասների չափով:

ԲԱԺԻՆ 9

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1. Պայմանագիրը կնքված է համարվում acba digital ինտերնետ բանկինգ համակարգում ներկայացվող օֆերտայի (առաջարկի) ակցեպտը Բանկի կողմից ստանալու պահից: Ընդ որում, Հաճախորդը օֆերտան (առաջարկը) ընդունում (ակցեպտավորում) է acba digital ինտերնետ բանկինգ համակարգում «Ստորագրել պայմանագրերը» հրահանգն ընտրելու միջոցով: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անժամկետ,

9.2. Պայմանագրում Կողմերի համաձայնությամբ փոփոխությունները և լրացումները կատարվում են 9.1 կետում նկարագրված եղանակով կամ Կողմերի միջև կնքվող գրավոր համաձայնագրով կամ

Կողմերի էլեկտրոնային հասցեների միջև փաստաթուղթ և/կամ հաղորդագրություն փոխանակելու միջոցով,

9.3. Պայմանագիրը կարող է միակողմանիորեն լուծվել Բանկի կամ Հաճախորդի կողմից, այդ մասին մյուս կողմին առնվազն 10 (տասը) աշխատանքային օր առաջ տեղեկացնելու պայմանով, իսկ 8.7 կետում նախատեսված դեպքերում և/կամ Գործակալի հետ համագործակցության դադարման դեպքում Պայմանագիրը կարող է միակողմանիորեն լուծվել Բանկի կողմից՝ առանց Հաճախորդին նախնական տեղեկացման,

9.4. Պայմանագրի ցանկացած հիմքով լուծման դեպքում Բանկն իրականացնում է Հաճախորդի Բրոքերային հաշիվների փակումը, ինչպես նաև Հաճախորդի արժեթղթերի և/կամ դրամական միջոցների վերադարձը վերջինիս՝ նշված արժեթղթերը և/կամ դրամական միջոցները Հաճախորդի հանձնարարականի համաձայն այլ արժեթղթերի/բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: Բանկի կողմից պահանջվող ժամկետում Հաճախորդի կողմից այլ արժեթղթերի հաշվի վերաբերյալ տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում Բանկն իրավունք ունի իրացնել Հաճախորդի Արժեթղթերը դրանց շուկայական իրացվելի գնով, որից ստացված գումարը փոխանցվում է Հաճախորդի՝ Բանկում կամ այլ բանկերում առկա բանկային որևէ հաշվի՝ Բանկի ընտրությամբ,

9.5. Պայմանագրի լուծումը Հաճախորդին չի ազատում մինչև Պայմանագրի լուծման պահն առաջացած պարտավորությունների կատարումից, այդ թվում՝ մինչև Պայմանագրի լուծման պահը ներկայացված Հանձնարարականների՝ ի կատարումն հաղորդման և կատարման արդյունքում առաջացած վճարների և ծախսերի հատուցման պարտականությունից,

9.6. Պայմանագրի շրջանակներում փաստաթղթերի, հաշվետվությունների և ցանկացած այլ տեղեկատվության/ծանուցումների փոխանակման, առաքման և փոխանցման հուսալի միջոց են համարվում Կողմերի՝ Պայմանագրում կամ «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկում նշված կոնտակտային տվյալները, ինչպես նաև Հարթակը: Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված, եթե ծանուցումն ուղարկվում է Հաճախորդի՝ Պայմանագրում և/կամ «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկում նշված հասցեին կամ հեռախոսահամարին կամ էլեկտրոնային հասցեին և/կամ հասանելի է դարձվում Հարթակում՝ անկախ այն փաստացի ստանալու հանգամանքից:

9.7. Կողմերի միջև առաջացող վեճերը և տարաձայնությունները լուծվում են փոխադարձ բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերն ու տարաձայնությունները ենթակա են կարգավորման ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով,

9.8. Բանկը Բրոքերային ծառայությունների մատուցումը համատեղում է Օրենքով նախատեսված այլ տեսակի ներդրումային ծառայությունների մատուցման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բանկային գործառնությունների հետ՝ Բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա,

9.9. Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյանի 6 հասցեում, հեռ՝ 583 841, կայք՝ www.cba.am, էլ. փոստ՝ mcba@cba.am

ՀԱՎԵԼՎԱԾ 1 ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը և ժամկետը.

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Բանկը (ՀՀ, ք. Երևան, Արամի 82-84) Հաճախորդի (այսուհետ՝ Տվյալների սուբյեկտ) հետ գործարար հարաբերությունների (գործարքների) ողջ ընթացքում, ինչպես նաև դրանից հետո, եթե ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի նկատմամբ կիրառելի այլ կարգավորումներով սահմանված է անձնական տվյալների մշակման պահանջ, կամ Բանկի մարքեթինգային նպատակներով կարող է ստանալ Տվյալների սուբյեկտի վերաբերյալ անձնական տվյալները և դրանք ներառել Բանկի համապատասխան տեղեկատվական բազաներում: Տվյալները կարող են տրամադրվել Տվյալների սուբյեկտի կողմից կամ ստացվել ստորև նշված անձանցից՝ վերջիններիս հարցում իրականացնելու միջոցով:

Մշակվող անձնական տվյալների ցանկը.

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ից (ԷԿԵՆԳ) ստացվող տվյալներն են.

Տրամադրող մարմին	Տվյալների ցանկ
ՀՀ Ոստիկանության բնակչության պետական ռեգիստր	• Անձը հաստատող փաստաթղթ(եր)ի տեսակ և տվյալներ (գործող և ոչ վավեր), կարգավիճակ, դրանցում առկա անձնական տվյալներ, ներառյալ՝ լուսանկար, անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, սեռ, քաղաքացիություն, հաշվառման հասցե, կարգավիճակ՝ կենդանի/մահացած, • ՀԾՀ/հրաժարման տեղեկանք(ներ)ի տվյալներ (գործող և ոչ վավեր), կարգավիճակ,
ՀՀ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն	• Ամուսնության/ամուսնալուծության գրանցման տվյալներ, դրանում առկա ամուսնու/կնոջ տվյալներ, ներառյալ՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, սեռ, քաղաքացիություն, կարգավիճակ՝ կենդանի/մահացած, հասցե, անձը հաստատող փաստաթղթ(եր)ի տվյալներ (գործող և ոչ վավեր), ՀԾՀ/հրաժարման տեղեկանք(ներ)ի տվյալներ (գործող և ոչ վավեր), • Երեխայի տվյալներ, ներառյալ՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, սեռ, քաղաքացիություն, կարգավիճակ՝ կենդանի/մահացած, հասցե, անձը հաստատող փաստաթղթ(եր)ի տվյալներ (գործող և ոչ վավեր), ՀԾՀ/հրաժարման տեղեկանք(ներ)ի տվյալներ (գործող և ոչ վավեր),

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամից ստացվող տվյալներն են.

Տվյալների խումբ	Տվյալների ցանկ
Անձնական տվյալներ	Ներառյալ՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, սեռ, անձը հաստատող փաստաթղթի տեսակ և տվյալներ, ՀԾՀ, հաշվառման հասցե
Աշխատավայրի ընթացիկ տվյալներ	Ներառյալ՝ կազմակերպության անվանում, ՀՎՀՀ, աշխատանքային պայմանագրի սկիզբ և վերջ, հաստիք, աշխատավարձի չափ, ԱՎՈՒՄ (Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ), հեռախոսահամար, հաշվառման հասցե
Աշխատավայր(եր)ի նախորդ տվյալներ	Ներառյալ՝ կազմակերպության անվանում, ՀՎՀՀ, աշխատանքային պայամանագրի սկիզբ և վերջ, հաստիք, աշխատավարձի չափ, ԱՎՈՒՄ (Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ), հեռախոսահամար, հաշվառման հասցե

Անձնական տվյալների մշակումը.

Վերը նշված տվյալները կարող են օգտագործվել, ուսումնասիրվել և վերլուծվել Տվյալների սուբյեկտի ներգրավմամբ ցանկացած բիզնես գործընթացում հետևյալ նպատակներով՝ անձնական տվյալների վերաբերյալ ստույգ տվյալների ստացում, առավել պատշաճ նույնականացում և տվյալների բազայի ուղղումների իրականացում, սպասարկման ժամանակատարության կրճատում, տեխնիկական սխալների բացառում: Վերը նշված տվյալները կարող են փոխանցվել ՀՀ կենտրոնական բանկին, իրավասու պետական մարմիններին, Գործակալներին, Ենթագործակալներին, Միջազգային շուկայում մասնագիտացված բոլոր այն անձանց, ովքեր ներգրավվում են Հանձնարարականների կատարման նպատակով, Կիրառելի կարգավորումների համաձայն՝ այլ երրորդ անձանց, ինչպես նաև այն անձանց, որոնց հետ Բանկն իր կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված կնքել է համագործակցության/ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Համաձայնության/անձնական տվյալների հետկանչը.

Համաձայնությունը/անձնական տվյալները կարող են հետ կանչվել, ուղղվել, ոչնչացվել, իսկ տվյալների մշակումը՝ դադարեցվել ցանկացած ժամանակ Տվյալների սուբյեկտի, իսկ տվյալների այլ սուբյեկտների՝ Տվյալների սուբյեկտի սպասարկման նպատակով տրամադրված տվյալների դեպքում՝ այդ անձանց գրավոր դիմումի հիման վրա:

Հաստատված ստորագրությամբ կամ էլեկտրոնային եղանակով՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ հետ կանչվելու դեպքում Բանկը պարտավոր է դադարեցնել անձնական տվյալներ մշակելը և ոչնչացնել տվյալները հետկանչն ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում, եթե տվյալ պահին Տվյալների սուբյեկտը չի օգտվում, ինչպես նաև ներգրավված չէ Բանկի կողմից մատուցվող որևէ ծառայության գծով գործող գործարար հարաբերությունում (գործարքում), ինչի համար համաձայնությունը և/կամ անձնական և այլ տվյալների մշակումն անհրաժեշտ է, և եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ և Բանկի ստանձնած/Բանկի նկատմամբ կիրառելի այլ կարգավորումներով: Մարքեթինգային նպատակներով հարցումների համաձայնությունը կարող է ցանկացած դեպքում հետ կանչվել էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումի հիման վրա:

Համաձայնության հետկանչի դեպքում Բանկն իրավունք ունեն դադարեցնել Տվյալների սուբյեկտի հետ գործարքը/գործարար հարաբերությունները: